քուերորդի թագաւորին, որ իշխան եկաց Ծովեղերեայ քաղաքացն, զորոյ անուն կոչեն Արաբացիք Քանդահրի։ Էին անդ և իշխանաւորք Լատինաց Հանկրի, Պալեան, և այլք, որք եւ ձեռս ետուն Սուլթանին 'ի հաշտութիւն։ Իսկ 'ի կողմանէ այլազգեաց երդուան Մէլիք Ատիլ եղբայր Սուլթանին. Մէլիք Աֆտալ և Մէլիք Զահր որդիք նորին, և այլք յիշխանացն, և հոչակեցաւ լուր հաշտութեան յամենայն տեղիս 'ի ձեռն մունետկաց յուրախութիւն ժողովրդոց (1191 'ի 1 Սեպտեմբերի)։ Զիջաւ Սուլթանն յաղաչանս Հուպերտ եպիսկոպոսին Սալիզպուրի, զի 2 քահանայք և 2 սարկաւագունք Լատինաց բնակեսցին 'ի տաճարն Ս. Յարութեան։ Դարձ արար Սուլթանն յԵրուսաղէմ և 'ի գլուխ հանեալ կատարեաց զչինութիւն պարսպի նորին. ելին նաեւ ոմանք 'ի Լատինաց եւ երկիրպագին Գերեզմանի Տեառն, որոյ վասն մղեալ էին զայնչափ պատերազմունս։ Իսկ թագաւորն Անգղիոյ յանձն արարեալ զծովեղերեայ քաղաքսն քուերորդւոյ իւրոյ, դարձաւ յԵւրոպա, և վակեցաւ յաշտարակի միում յաշխարհին Գերմանիոյ։

Ի սմին ժամանակի վախճանեցաւ Տ. Աբրահամ Արք եպիսկոպոսն և Պատրիարդն Ս. Երուսաղէմի՝ եւ թաղեցաւ 'ի գաւթի տաճարին Ս. Յակոբայ, ուր երեւի ցարդ արձանագրեալ տասանաբար նորին (1192). Եւ յաջորդեաց զաթոռն Տ. Մինաս Արք եպիսկոպոսն։ Սա դտաւ ընդ այլ եպիսկոպոսունս 'ի Հանդիսի օծման Լեւոն Ա. թագաւորին Հայոց 'ի Տարսոն Կիլիկեցւոց (1198)։

Սալահատտին կարգեաց քաղաքապետ Երուսաղէմի, և զեկեղեցին, յանուն Ս. Աստուածածնի, որ օթեւան էր Տաճարական սասլետաց, մերձ 'ի տաճարն Ս. Յարութեան՝ յարեւելից հարաւոյ, արար հիւանդանոց այլազգեաց, և ինքն մեկնեցաւ 'ի Պէրութ, ուր եկն յողջոյն Լատին իշխանն Անտիոքայ, և ընդ նմա էին 14 սասլետաք. Սուլթանն սիրով ընկալեալ զնոսա՝ զդեցոյց նոցա հանդերձ պատուոյ։ Եւ 'ի հասանիլն 'ի Դամասկոս զայրացաւ ախտ հիւանդութեան իւրոյ և անկաւ 'ի մահիճս, եւ կոչեալ առ ինքն զգահաժառանգ որդին իւր Մէլիք Աֆտալ՝ աւանդեաց նմա զվերջին իւր հայրական խրատս, պատկառ կալ